դարձվում մաքրության վրա, այնպես որ և կտտոցն ամիսներ շարունակ կուտակվում է և ոտքի տակ ամրանալով գոյանում է տարբ, որը հետո կտրվում է աղյուսաձև և գործ է ածվում որպես վառելիք: Շենքը ցածր պատերով է շրջապատվում և շատ պարզ տանիքով ծածկվում: Արխաջը մեծ մասամբ փորվում է կամ սարալանջի մեջ, կամ շինվում է բնական քարայրի մեջ: Այծերի համար բաժանվում է հատակից մոտ մեկ մետր բարձրացրած բաժին՝ թառ: Ցածրահասակ ախոռնէր՝ մսուրներ այստեղ էլ երբեմն լինում են: Առանձնացվում է տախտակներով կամ բարակ պատով կոնաձուցը, ինչպես կռնմի մեջ վրբաձուցը՝ հորթանոց:

Գոմի պես մի պարզ շենք է Զանգեզուրում հարդանոցը: Ինչպես հայտնի է, հացահատիկի ծղոտը, հայաբնակ գյուղերում, ինչպես առհասարակ Անդրկովկասում և անմիջապես կից երկրներում, այլ գործադրություն ունի, քան թե Ռուսաստանում և ամենուրեք Եվրոպայում: Կալում կամերով կալսվելուց հետո ծղոտը վեր է ածվում դարմանի՝ հարդի, որն անասունի համար, մանավանդ ձմեռը, հիմնական կերանյութ է: Այդ պատճառով լավ պայմանների մեջ նրա պահպանումը հատուկ հոգատարություն է պահանջում: Հնագույն ավանդությունը պատմում է, որ Վահագն աստվածն իր կովերը կերակրելու համար գողացել էր հարդը Բարշամին դիքից և փախցրել երկինք: Թափած հարդի ճանապարհն է, որ առաջացել է երկնքում, և այսօր էլ կոչվում է հարդագողի ճանապարհ[25]: Հարդն այնքան թանկագին բան է գյուղացու համար, որ նույնիսկ նրա աստվածները կանգ չեն առնում կարիք եղած ժամանակ այն գողանալու առջև: Զանգեզուրի հայը հարդը պահում է մառաֆում՝ մարագում, որը գոմից շատ ավելի խնամքով է կառուցվում[26]: Հարդը խոնավությունից պաշտպանելու համար քարե պատերով շենք է կառուցվում, նույնիսկ այն ժամանակ, երբ այն նստած է լինում հողի մեջ: Աշխատում են ընտրել այնպիսի վայր, որ պատերից միայն մեկը, որի մեջ թողած բացվածքով հարդը ներս է ձգվում, լինի հողի մեջ, մյուսները լինեն հողից բարձր: Տանիքի կառուցվածքը հատկապես աչքի առաջ ունի օդափոխության դյուրացումը խոնավությունը հեռացնելու նպատակով: Այդ պատճառով տանիքն ավելի է բարձրացվում, քան թե գոմում և դրա համար միջին սյուների շարքը շատ է վեր ելնում և երկու թեքերի թեքությունը ավելանում է, առջևի և ետևի պատերի գլխին առաջ են գալիս եռանկյունի ազատ տարածություններ, որոնք լցվում են ճյուղերի ցանցառ հյուսվածքով, որպեսզի օդը տանիքի տակ շարունակ խաղա: Եթե մառաֆի երկարությունը մեծ չէ, բավականանում են մեկ-մեկ սյուն տնկելով այս և այն գլխին և գլուխները մեկ գերանով միացնելով, իսկ եթե մեծ է՝ այդ գերանի տակ կանգնեցվում են մի քանի նեցուկ-սյուներ շենքի մեջտեղով: Կան մառաֆներ, որտեղ այդ օժանդակ սյուներին ընդհուպ, պատերին գրեթե հավասար բարձրության վրա ձգված են աջ և ձախ կողմից առջևի պատի գլխից մինչև ետևի պատի գլուխը, մի-մի գերան և այդ ջուխտակ գերանների վրա դարսվում են կոճեր. տանիքի տակ կազմվում է մի հորիզոնական ցանցավոր առաստաղ, որի վրա լցվում է խոտը, իսկ տակը մնում է հարդն՝ առանց իր

---

[25] Այս ճանապարհը հունական ավանդությունն անվանում է «Ծիր կաթին», բացատրելով որպես հետք այն կաթի, որը դուրս է ցայտել Հերայի ստինքից:

[26] Այս հատկապես շեշտում է Փարսադան Տեր-Մովսիսյանն իր վերը հիշած աշխատության մեջ, էջ 68: